



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ «ՀԱՅԿԱԾԵՆ» ԱՄԱՌԱՆՈՒՑԻՒՆ ՇԵՆՔԻ ՀԻՄՆԱՐԿԵՔԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ԲՅՈՒՐԱԿԱՆՈՒՄ

Հունիսի 14-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 12-ին, հանդիսավոր իրադրության մեջ և խանդավան մթնոլորտում և օրինությամբ Վեհափառ Հայրապետի կատարվում է Աշտարակի շրջանի Բյուրական գյուղում հայրապետական «Հայկաշեն» նոր ամառանոցին շենքի հիմնարկեքը:

Ամառանոցին պայծառ առավոտ է: Գերագույն հոգեւոր խորհուրդը, Մայր Աթոռի միաբանությունը, մայրավանքի պաշտոնությունը, Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովի անդամները, հոգեվոր ճեմարանի դասախոսներն ու լսարանների ուսանողությունը ինքաջարժով մեկնում են Բյուրական՝ ներկա լինելու հանդիսությանը:

Դեպի Բյուրական տանող հանապարհի եզրերին բազմաթիվ հավատացյալներ անհամբեր սպասում են Ն. Ս. Օծության ժամանելուն և ապա իրենց որդիական հարգանքը մատուցում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին:

Ամառանոցի կառուցվելիք շենքի հողամասը սիրով տրամադրել է Հայոց Հայրապետին հայրենի իշխանությունը: Հողամասը գտնվում է Բյուրական գյուղի վերին մասում, Արագածի գեղատեսիլ, զմրուխտյալ լանջին: Հողամասի երկու կողմերից ձորներ գահավիժում երկու փրփրադեգ գետակներ: Ամենուրեք ծաղկեներ, ջոշունների ճովոյցուն, կենարար օդ, սառնորակ ջրեր:

Բյուրականը Այրարատ աշխարհի Արագածոտն գալաքի ամենամեծ գյուղն է եղել,

որի մասին առաջին անգամ հիշատակում է Ժ դարի սկզբին Հովհաննես Դրասխանակերոցի կաթողիկոսը:

Ժ դարում Մկրտիչ անունով մի քահանա Բյուրականում ընդորինակել է «Ձիտուս որդի» գիրքը, որի հիշատակարանում նշում է, որ այս գյուղու կան մենաստաններ՝ և Աստվածածին և ս. Հովհան եկեղեցիներով:

1874 թ. Գևորգ Դ կաթողիկոսը պատեղ կառուցում է հայրապետական ամառանոց:

Ն. Ս. Օծությունը իր շքախմբով ժամանում է հայրապետական ապագա ամառանոցավայրը: Բազմաթիվ մեքենաներ ու քանիչներ, շինարար վարպետներ աշխատում են, փորում շենքի հիմքերը:


Ամառանոցի հայսագիծը պատրաստել է անվանի ճարտարապետ և Մայր Աթոռի ճարտարապետական հանձնաժողովի անդամ Ռաֆայել Խորյելյանը:

Հավատացյալների, մտավորականների և շինարար-վարպետների խումբը չերմորեն շրջապատում է իր Վեհափառ Հայրապետին:

Հայրապետական ամառանոցը կառուցվում է ամերիկանական ծանօթ ու հարգված ազգային և Մայր Աթոռի բարերար տիսար Հայկ Գավուքճյանի նվիրատվությամբ:

Հանդիսությանը ներկա են նաև ՀԱԱՀ Մինիստրների տովեսին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի հախագան Կ. Դալլարչյանը և տեղակալ Ս. Հովհաննիսիանը:

Սկսվում է հիմնարկերի օրինությունը: Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ





Վեհափառ Հայրապետը հիշատակարանը ամփոփում է «Հայկաշեն»-ի հիմքում

պատրաստվել էր հետևյալ հիշատակարանը, որը դրվելու էր, ըստ հայկական սովորության, նորակառուց շենքի հիմքում.

Ֆիշատակարան

Ի Հայրապետութեան Տեան Տեան Վազգենի Առաջնոյ կաթողիկոսին Ամենայն Հայոց, կառուցաւ հայրապետական հովոց ի լեռնակողման Քիրականայ գեղջ, արդեամբ և ծախիր կ. պոլսեցի ամերկաբնակ Հայկ Գաւութեանի, վասնորոյ կոչեցաւ հովոց՝

«Հ ա յ կ ա շ է Ա», ի լիշատակ հանգուցեալ ծնողացն իրոյ, և ի վայելումն հարյապետացն Ամենայն Հայոց, և միաբանիցն Մայր Աթոռոյ սրբու Էջմիածնի:

Ֆիշատակն բարերարին օրինութեամբ եղիցի. ամէն:

Ի 14-ն յունիսի 1969 ամի:

Այս հիշատակարանի վրա ստորագրում են՝ Վեհափառ Հայրապետը, Մայր Աթոռի միաբանները, ճարտարապետ Ռ. Խորավելյանը, շինարարները և ներկաներից շատերը: Այս հիշատակարանը դրվում է ապակէ սրբակի մեջ, զմուսկում և Հայոց Հայրապե-

տի օրմնությամբ տեղադրվում է շնչքի հիմքում:

Սկսվում է հիմնարկեքի օրմնության արարողությունը. «Ն վերայ վիսի հաւատոյ շինեցեր զբակարան ալս, զաս պահեա ի խաղաղութեան»: Մայր Մաշտոցից քաղվածարար կարդացվում են հիմնարկի վերաբերյալ և գրական ընթերցումներ, համապատասխան երգերով, և վերջում «Եջմիածին ի Հօրէ» շարականը: Արարողությունը վերջանում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և միաբերան երգված «Հայր մեր»-ով:

Այնուհետևն բոլոր ներկաները հյուրափակում են հայկական կոնյակով և քացցրավեճիքով՝ բարեմաղթություններ անելով հայրապետական ամառանոցի հաջող և շոտափոյթ կառուցման համար:

Վեհափառ Հայրապետը խոսք առնելով այս ուրախ ու պատմական առիթով, ասում է.

Նախ Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում մեր հայրեմի բարեխմամ կառավարությամբ, որի բույզտվությամբ

և արտոնությամբ ստացանք, այս երկու հեկտարանոց հողակտորը՝ «Հայկաշէն»-ը կառուցելու համար: Այնուհետև Մեր շնորհակալությունն ենք հայտնում բոլոր այն դեկավար մարմիններին, որոնք այս գործում օգտակար եղան և պիտի լինեն մեզ: Մենք՝ որպես հայ եկեղեցու Պետ, օրինում ենք մեր տաղանդավարը, աշխատաեր և շինարար Բայ ժողովուրդը, որի կառուցդական հանձնարը հայտնի է ողջ մարդկությանը: Թող միշտ շիմի, կառուցի մեր ժողովուրդը և շնորհացմի մեր մայր հայրեմիքը:

Ապա Ն. Ս. Օծույցունը նր խոսքն ուղղելով «Հայկաշէն»-ի շինարարներին, բաևվորներին, օրինում է նրանց աշխարհաշէն, պատվավոր գործը, ցանկանում է բոլորին քաջառողջություն, ձեռնարկած գործի բարեհաջող ավարտ:

Ժամը 18-ին Վեհափառ Հայրապետը հրաժեշտ տալով բոլոր ներկաներին, նոգեպես մսիթարված ու բարձր տրամադրության մեջ, նր շքախմբով վերադառնում է Մայր Աթոռ:

